Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.08.2021թ. թիվ 2113197188 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<23>>08 2021թ. 7-13 12704 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վասիլի Գևորգյանի թիվ ՄԴ/68076-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Փափազյան փողոցի 15 շենքի 58 բնակարանի բնակիչ Վասիլի Գևորգյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.08.2021թ. թիվ 2113197188 որոշումը՝ նշելով, որ դրանով ամրագրված խախտումը սխալ է որակվել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

*<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:*

*ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների վրա և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում:***

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ տրանսպորտային միջոցի վարորդը 24.07.2021թ. ժամը 14^{24}-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Փափազյան-Էմին փողոցների խաչմերուկի հատվածում հետիոտնային անցումների վրա՝ խախտելով վերը նշված նորմի պահանջը:

Ինչ վերաբերվում է դիմումատուի ակնարկին՝ իրավախախտման սխալ որակման վերաբերյալ, ապա այն արժանահավատ համարել հնարավոր չէ, քանի որ վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութն ապացուցում է արձանագրված խախտման իրավաչափությունը: Այո, դիմումատուի գործողություններում առկա է եղել նաև խաչմերուկի անցման կանոնի խախտում (<<Կանգ-գիծ>> գծանշումը լուսացույցի արգելող (կարմիր) ազդանշանով հատելու արդյունքում), ինչը պատճառ է հանդիսացել վերջինիս հետիոտնային անցումների վրա հարկադրված կանգառ կատարելուն, այսինքն՝ խախտումը ծնել է խախտում, որը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով, որն էլ արձանագրվել է վարչական մարմնի կողմից:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ դիմումատուի գործողություններում առկա է մեղքը, իսկ մեղքը դա անձի հոգեկան վերաբերմունքն է իր կատարած արարքին և դրան հաջորդող հետևանքին, որը կարող է դրսևորվել ինչպես **<u>դիտավորությամբ</u>**, այնպես էլ **<u>անզգուշությամբ</u>**, ինչի պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով որևէ նշանակություն չունի, թե կոնկրետ արարքը վարորդը կատարում է այն պատճառով, որ հստակ գիտակցում է, որ դա խախտում է և դիտավորությամբ կատարում, թե այն պատճառով, որ վարորդը գիտակցում է, որ այդ արարքը արգելված է օրենքով, սակայն ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրա հետևանքները վրա չեն հասնի և թե այն պատճառով, որ վարորդը չի գիտակցել իր գործողության հակաիրավական բնույթը, սակայն կարող էր և պարտավոր էր գիտակցել այն (ՎԻՎՕ՝ հոդված 11)՝ զանցակազմի սուբյեկտիվ կողմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր ***(դիտավորյալ կամ անզգույշ)*** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար ակնհայտ է, որ անկախ անձի կողմից մեղքի ձևի դրսևորումից, նշված օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված արարք կատարած անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 12.08.2021թ. թիվ 2113197188 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վասիլի Գևորգյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Դ.Բալաբանյան
Հեռ.՝ 011 544-783